ՀԱՅ ԱՍՏ ԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏ ՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«06» փետրվարի 2019թ.

Հարգելի Շուշան Դոյդոյան

Ի պատասխան Ձեր հարցման՝ հայտնում ենք.

ՀՀ պետական վերահսկողական ծառայության աշխատակիցների աշխատավարձերը (ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և այլ վճարները հանելուց հետո) կազմում են.

- Ծառայության ղեկավար – 565,450 ՀՀ դրամ
- Ծառայության ղեկավարի տեղակալ – 398,777 ՀՀ դրամ
- Ծառայության ղեկավարի խորհրդական – 224,845 ՀՀ դրամ
- Ծառայության ղեկավարի օգնական – 213,353 ՀՀ դրամ
- Ծառայության ղեկավարի տեղակալի օգնական – 144,402 ՀՀ դրամ
- Գլխավոր քարտուղար – 336,989 ՀՀ դրամ
- Վարչության պետ – 229,967 ՀՀ դրամ
- Վարչության պետի տեղակալ – 190,238 ՀՀ դրամ
- Վարչության գլխավոր մասնագետ – 165,644 ՀՀ դրամ
- Վարչության առաջատար մասնագետ – 115,545 ՀՀ դրամ
- Բաժնի պետ – 197,315 ՀՀ դրամ
- Բաժնի պետի տեղակալ – 154,055 ՀՀ դրամ
- Բաժնի գլխավոր մասնագետ – 149,787 ՀՀ դրամ
- Բաժնի առաջատար մասնագետ – 95,577 ՀՀ դրամ
- Քաղաքացիական աշխատանք կատարողներ – 131,761 ՀՀ դրամ
- Տեխնիկական սպասարկողներ – 69,416 ՀՀ դրամ

**(Աշխատավարձերի գումարները ներկայացված են միջինացված թվերով՝ հաշվի առնելով յուրաքանչյուր աշխատակցի աշխատանքային ստաժով պայմանավորված դրույքաչափերը)*

2018 թվականի ընթացքում աշխատակիցներին պարգևատրումները տրամադրվել են եռամսյակային կտրվածքով մեկ պաշտոնային դրույքաչափի չափով *(վերը նշված*

աշխատավարձերով)՝ յուրաքանչյուր աշխատակցի փաստացի աշխատած ժամանակահատվածի համամասնությամբ, ինչպես նաև տարեվերջյան խրախուսում՝ մեկ պաշտոնային դրույքաչափով: Աշխատակիցներին խրախուսումը տրամադրվել է՝ հիմք ընդունելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասը, 22-րդ հոդվածի 9-րդ մասը, Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, ՀՀ կառավարության 2014 թվականի 737-Ն որոշման 3-րդ կետը:

2018թ. ընթացքում տրամադրված խրախուսումների ընդհանուր գումարը կազմել է 46,038.7 հազ. դրամ, որը բաշխվել է ընդամենը 112 աշխատակիցների միջև:

Նույնաբովանդակ հաղորդագրությունը դեռևս սույն թվականի փետրվարի 2-ին զետեղել ենք ՊՎԾ ֆեյսբուքյան էջում:

ՊՎԾ լրատվության և հասարակության հետ կապերի բաժին